Հումանիտար գիտություններ №-2 (40) 2021 Гуманитарные науки

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Հ.Ա., ՍՈՂՈՅԱՆ Ս. Ս.

Խաչատուր Աբովյան անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան

Շիրակի պետական համալսարան

hamgalo@mail.ru . sogspartak@mail.ru

Հիմնական դպրոցի կրթական գործընթացում դիտարկվում է էլեկտրոնային ուսուցումը՝ որպես տեղեկահաղորդակցական տեխնոլոգիա: Սույն հոդվածի նպատակն է քննարկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ)սովորողների շրջանում էլեկտրոնային ուսուցման առանձնահատկությունները և այդ գործընթացում ուսուցիչների կոմպետենցիաների դրսևորումները:

Դիտարկելով այդպիսի սովորողների ինտեգրումը ինֆորմատիկայի դասագործընթաց՝ կարելի է ընդգծել, որ էլեկտրոնային գործիքները փոխում են մարդու կյանքը, նրան դարձնում առավել հետաքրքիր և նպատակասլաց: Որոշ դեպքերում ԿԱՊԿՈՒ սովորողներն իրենց կարողություններով չեն զիջում ընկերներին, երբեմն առաջանցիկ դեր են ստանձնում:

Հիմնաբառեր՝ ԿԱՊԿՈՒ սովորողներ, էլեկտրոնային ուսուցում, էլեկտրոնային գրատախտակ, ուսումնական գործընթաց, ուսուցման մեթոդներ:

Ներկայացված է խմբագրություն 15.11. 2021թ

21-րդ դարի աշակերտի տեղեկատվական մշակույթի, նրա աշխարհայացքի ձևավորման ու աշխարհաճանաչողության համար էական նշանակություն ունի էլեկտրոնային ուսուցումը [1]: Համակարգչի օգտագործումը ուսումնական գործընթացում երեխայի մոտ զարգացնում է տեսողական կողմնորոշումը, ձեռքի մկանները, նպաստում է սովորողի վերացական մտածողության ձևավորմանը 2]: Այս առումով անհրաժեշտ է մշակել այն գործիքակազմը, որը կբարձրացնի ինֆորմատիկայի ուսուցման արդյունավետությունը, կապահովի էլեկտրոնային ուսուցման և ինտերակտիվ մեթոդների համադրումը, ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների դրսևորումը:

Հիմնախնդրին տարաբնույթ դիտանկյուններից անդրադարձել են տարբեր հետազոտողներ:Կարևորելով ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը ինֆորմատիկայի դասագործընթաց՝ հետազոտողները ընդգծում են, որ էլեկտրոնային գործիքները փոխում են մարդու կյանքը, նրան դարձնում ավելի հետաքրքրասեր, առավել զարգացած: Ըստ Վ. Սոկոլովի՝ որոշ դեպքերում այդպիսի սովորողներն իրենց կարողություններով չեն զիջում ընկերներին, երբեմն առաջանցիկ դեր են ստանձնում: Շեշտադրվում է նաև միջին դպրոցում այդպիսի սովորողների հետ աշխատող ուսուցիչների վերապատրաստման կարևորությունը [3], որովհետև յուրաքանչյուր իրավիճակ ուսուցչի համար պահանջում է նոր կարողություն և հմտություն:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրություններ ենք կատարել Երևանի Գ. Ստեփանյանի անվան 135 հիմնական դպրոցի 5-րդ դասարանների թվով 48 աշակերտների և մի քանի ուսուցիչների հետ: Փորձարարական աշխատանքներն սկսվել են 2020թ. փետրվար-մայիս ամիսներին:Դպրոցն ունի ավելի քան 1400 աշակերտ, որից շուրջ 35-ը ներառված երեխաներ են: Հարցաթերթիկների միջոցով փորձել ենք ուսուցիչներից տեղեկանալ, թե ինչպես են նրանք աշխատում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներով համալրված դասարաններում: Ուսուցիչների մի մասը հաճախ դժվարություն է ունենում նման երեխաների հետ աշխատելիս: Այդպիսի սովորողներն ավելի նյարդային են և մեկուսացված են ընդհանուր դասագործընթացից: Ավելի երիտասարդ ուսուցիչները գտնում են, որ էլեկտրոնային ուսուցումը անհրաժեշտ է ԿԱՊԿՈՒ սովորողներին՝ զարգացնելու նրանց ստեղծագործական ակտիվությունը, սեր արթնացնելու ուսումնական պարապմունքների հանդեպ, ապահովելու տեղեկատվական հասանելիություն:

Բացահայտվել են ինֆորմատիկայի դասագործընթացի վերաբերյալ գիտական դիրքորոշումները, մոտեցումներն ու հայեցակարգերը: Ուսումնասիրվել են ինֆորմատիկայի ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները:

Փաստաթղթային առումով հաշվի են առնվել ԿԱՊԿՈՒ սովորողների վերաբերյալ նյութերը [4]:

Պետք է փաստել, որ ԿԱՊԿՈՒ սովորողների համար զգալի են որոշակի դժվարություններ «Ինֆորմատիկա» առարկայի յուրացման գործընթացում՝ կապված նրանց ընկալման, նյութի մտապահման և վերարտադրման հետ: Ներառական կրթության կազմակերպման մոտեցումներից մեկն այն է, որ ներառված սովորողները ամբողջովին չեն կարող տիրապետել ուսումնական ծրագրերին: Ընդհանուր առմամբ, նրանց համար (լսողության, տեսողության, մտավոր զարգացման խանգարումներ, զարգացման հապաղում ունեցող երեխաներ և այլն) բնութագրական են հետաքրքրությունների միակողմանիությունը: Օրինակ, լսողության խանգարումներ ունեցող երեխաների մոտ զարգանում է հետաքրքրությունը առավել պրակտիկ գործունեության նկատմամբ (սեր

սպորտի, տարատեսակ խաղերի հանդեպ, համակարգչի նախնական կարողության ձգտում և այլն): Տեսողության խանգարումներ ունեցող երեխաներն ավելի շատ հետաքրքրված են երաժշտությամբ, հումանիտար գիտություններով:

«Ինֆորմատիկա» առարկայի դասագործընթացում տեղեկատվական, հաղորդակցական միջոցները հավասարապես անհրաժեշտ են բոլոր սովորողներին: Ինֆորմատիկայի դասընթացի հիմնանպատակները աշակերտների հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների, ինքնուրույնության զարգացումն են:

Տեղեկատվական միջոցների կիրառման պայմաններում օգտագործվում է էլեկտրոնային գրատախտակը, որը լարում է աշակերտի ուշադրությունը, նրան մղում ավելի լավ ընկալելու իրավիճակը: Այն ակնառու կերպով ներկայացնելը օգնում է սովորողին՝ զարգացնելու էլեկտրոնային գրատախտակից օգտվելու կարողությունը: Ուսումնական բաշխիչ նյութերի վրա տեսողական կենտրոնացումը հանգեցնում է ուշադրության բաշխվածության և փոխանցման, հետևաբար կարևոր է զգայարանների առավելագույն ներգրավումը առաջադիր գործընթացին:

Դասագործընթացում բնականաբար հաշվի են առնվում մանկավարժական այն պայմանները, որոնք ուղղված են հոգեֆիզիոլոգիական վիճակների դրական փոփոխությանը, կենսափորձի հարստացմանը, հասակակիցների հետ արդյունավետ հաղորդակցմանը:

Եթե փորձենք համակարգել վերը նշված կարողությունները, կարող ենք հանգել ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների դերի բարձրացման անհրաժեշտությանը:

Հարկ է անդրադառնալ «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաներին: Այսօր էլեկտրոնային ուսուցման դասագործընթացին ուսուցիչների կողմից գործադրվում են մանկավարժական կոմպետենցիաներ ժամանակակից դաս վարելու համար: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Գիտական կոմպետենցիաներ. ինֆորմատիկա առարկային վերաբերող գիտելիքներ, տեղեկացվածության բարձր աստիճան, ինչպես նաև առարկայի վերաբերյալ նորագույն հետազոտություններ: Սրանք այն գիտելիքներն ու կարողություններն են, որոնք հատուկ են տվյալ գիտությանը և կոնկրետ ինֆորմատիկային:

2. Մեթոդական կոմպետենցիաներ. սրանք վերաբերում են մեթոդներին, հնարքներին և առանձնահատկություններին, որոնք նախատեսված են ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքի կազմակերպմանը: Այս կոմպետենցիաները վերաբերում են փոխգործուն մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, դասի վերահսկմանը, սովորել-սովորեցնելու մանկավարժական խնդիրների առաջադրմանը, խմբային և անհատական աշխատանքների իրականացմանը:

3. Սոցիալական կոմպետենցիաներ. որքանո՞վ են աշակերտները միմյանց հետ շփվում և

հաղորդակցվում և միմյանց հաղորդում ուսուցչի բացատրությունը. թիմային աշխատանքում որոշակի դերակատարում ստանձնել, ազատ շփվել ԿԱՊԿՈՒ սովորողների հետ և կարծիքներ հայտնել:

Բոլոր երեխաներն ունեն հասակակիցների աջակցության և օգնության կարիք: Նպաստել գիտելիքի ու կարողությունների փոխանցմանը (այդ ընթացքում ձևավորվում են հաղորդակցական կարողություններ):

4. Անձնային կոմպետենցիաներ. խոսքը վերաբերում է սովորողի ինտելեկտուալ և հուզական զարգացմանը, անձնային աճին: Որքանո՞վ է ինֆորմատիկայի ուսուցիչն աշխատում իր կարողությունների և հմտությունների զարգացման ուղղությամբ, որքանո՞վ է կատարելագործում իր անհատական զարգացումը, որքանո՞վ է հասցնում ճանաչել ինքն իրեն:

Կրթության մասին օրենքը, սակայն, յուրաքանչյուր երեխայի համար սահմանում և ապահովում է կրթության մատչելիություն և հավասար հնարավորություններ: Կրթական գործընթացին սովորողների ներգրավելու հավասար մատչելիություն ապահովելու հնարավորությունը ներդրված է ՀՀ հանրակրթական դպրոցներում: Այս դեպքում հաշվի են առնվում հատուկ կրթական կարիքների տեսակը և աջակցման հնարավորությունները: Նման կրթությունը տարբեր մակարդակներում ներդրվում է ուսումնական հաստատություններում՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ: Միջին դպրոցում «Ինֆորմատիկա» առարկայի դասագործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ են՝ 1)կրթական ծրագրեր, 2) դասագրքեր, ուսումնական գործիքներ (համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, տեսահեռախոս և այլն), դիդակտիկ նյութեր, 3) ուսուցման նոր մեթոդներ, ձևեր և տեխնոլոգիաներ:

Կրթական միջավայրում նման գործառույթներ իրականացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է նաև մանկավարժի օգնականի աշխատանքը, որը կարող է՝

Ա) աշակերտներին տրամադրել անհրաժեշտ տեխնիկական օգնություն,

Բ) կազմակերպել ներառված աշակերտների՝ դասագործընթացից դուրս ժամանակային կարգավորումը,

Գ) օգնել կրթական գործունեություն իրականցնող ուսուցիչներին և այլն:

Ինֆորմատիկայի դասագործընթացը այլևս համատեղ ուսուցում է, համատեղ ուսումնական դասընթացի կազմակերպում, ուր ընդգրկված են ԿԱՊԿՈՒ անձինք և նման սահմանափակումներ չունեցող անձինք:

Նման միջավայրում բարձրանում է ուսուցիչների անձնական պատասխանատվությունը՝ ի նպաստ բոլոր սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացմանը, քանի որ էլեկտրոնային ուսուցումը լուրջ ներուժ է այս գործընթացի արմատավորման համար: Դասագործընթացում սովորողների համար իրական հնարավորություններ են ստեղծվում ինքնահիրացվելու: ԿԱՊԿՈՒ աշակերտները

ինտեգրվում են դասին, որն ապահովում է ինտերակտիվ և որակյալ ուսուցում:

Այսպիսով՝ մասնավորեցնելով ինֆորմատիկայի ուսուցիչների մասնագիտական կոմետենցիաները ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքներում՝ ընդգծենք, որ դասագործընթացի առանձնահատկությունների և ԿԱՊԿՈՒ երեխաների հնարավորությունների համապատասխանեցումը առանցնահերթ խնդիր է՝ նպատակ ունենալով առավելագույնս հաշվի առնել երեխաների տեսողական, լսողական կամ դրանց համադրման իրական հնարավորությունները ուշադրության, նյութի մտապահման և վերարտադրման, ինչպես նաև ինքնուրույն հանձնարարություններ կատարելու տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Соколов В.**, Особенности обучения детей с глубоким нарушением зрения современным информационным технологиям, Дефектология, N 4, M. , 2013, с. 65:
2. **Кукушкина О.**, Информационные технологии в контексте отечественной традиции специального образования, M., 2005, էջ 24:
3. **Соколов В.**, նույն տեղում, էջ 36:
4. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf, 10.09.2019.
5. THE WAYS OF EXPRESSING PROFESSIONAL COMPETENCES OF INFORMATICS

TEACHERS IN BASIC SCHOOLS WHEN DEALING WITH CHILDREN WITH DISABILITIES

GALSTYAN H.A., SOGOYAN S.S.

Teacher at Yerevan Basic School # 135

Shirak State University

Nowadays, in the process of education in basic school, learning electronics is seen as an information technology. Features of learning electronics are most important among pupils in need of special teaching conditions. Learning electronics stimulates the cognitive activity of pupils, contributes to the complete assimilation of the educational material.

Using a computer in the learning process develops the child's arm muscles, visual orientation, and contributes to the formation of abstract thinking. In this regard, it is necessary to develop a toolkit that will increase the effectiveness of teaching computer science, ensuring a comparison of learning electronics and interactive methods.

Attaching particular importance to the integration of computer science in the teaching

process for pupils in need of special teaching conditions, a significant part of the researchers emphasizes that electronic tools change a person's life, making him more active and purposeful. In some cases, such pupils are not inferior in ability to their friends, and sometimes they play an advanced role. The study offers practical materials and guidelines.

Key words: Learners with special needs, online teaching,electronic board, teaching process, teaching methods.

РЕЗЮМЕ

СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ КОМПЕТЕНЦИЙ ПРЕПОДАВАТЕЛЕЙ ИНФОРМАТИКИ В ОСНОВНЫХ ШКОЛАХ ПРИ РАБОТЕ С ДЕТЬМИ-ИНВАЛИДАМИ

Галстян Г.А., Согоян С.С.

В настоящее время в процессе обучения в основной школе изучение электроники рассматривается как информационная технология. Особенности обучения электронике наиболее важны для учеников, нуждающихся в особых условиях обучения. Обучающая электроника стимулирует познавательную активность школьников, способствует полному усвоению учебного материала.

Использование компьютера в процессе обучения развивает у ребенка мышцы рук, зрительную ориентацию, способствует формированию абстрактного мышления. В связи с этим необходимо разработать инструментарий, который повысит эффективность обучения информатике, обеспечив сравнение обучающей электроники и интерактивных методов.Придавая особое значение интеграции информатики в процесс обучения школьников, нуждающихся в особых условиях обучения, значительная часть исследователей подчеркивает, что электронные инструменты меняют жизнь человека, делая его более активным и целеустремленным. В некоторых случаях такие ученики не уступают по способностям своих друзей, а иногда играют более важную роль. В исследовании предлагаются практические материалы и руководства.

Ключевые слова. Электронное обучение, электронная доска, учебный процесс, методы обучения.

Հոդվածը տպագրության է երաշխավորել մանկավարժական գիտ.-ի թեկնածու, դոցենտ Գ. Էլոյանը: